

## Արձանագրություն N7

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտխորհրդի

06.03.19թ.նիստի

### Օրակարգ

1. ԵՊՀ շուրջ ստեղծված իրավիճակի քննարկում:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 32 անդամներից 21-ը:

1. Լսեցին՝ ԵՊՀ շուրջ ստեղծված իրավիճակի հարցը:

Արտահայտվեցին՝ դեկան Ս.Աբրահամյանը, ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ Ջ. Հարությունյանը, թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ Ռ.Ղազարյանը, անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Ս.Գասպարյանը, անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ.Ապրեսյանը, ՌԻԽ նախագահ Ա. Ղազարյանը:

Դեկան Ս.Աբրահամյանը անդրադարձավ ԵՊՀ -ի շուրջ ստեղծված իրավիճակին նշելով, որ մեկ ամիս առաջ տեղի էր ունեցել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նիստը, որը միաձայն հավանություն էր տվել էր ռեկտորի հաշվետվությանը: Դրանից հետո նորից հրավիրվում է նիստ՝ օրակարգում ունենալով մեկ հարց՝ դադարեցնել ռեկտորի լիազորությունները: Խախտվել է պատճառահետևանքային կապը՝ լիազորությունների դադարեցման հարց կարող է դրվել միայն հաշվետվության քննարկման և գործունեությանը համապատասխան բացասական գնահատական տալու պարագայում: ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի մեր ֆակուլտետի ներկայացուցիչ Մ. Ապրեսյանը նիստի ժամանակ նույնպես հայտնեց իր տարակուսանքը, թե ինչպես կարելի է դրական գնահատական տալ մեկ ամիս առաջ և հետո ակնկալել ուրիշ գնահատական: Ս.Աբրահամյանը նշեց, որ զարմանալի է, որ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամը ԵՊՀ-ն անվանում է ճահիճ: ԵՊՀ-ն վարկանիշային բոլոր հարցումներում Հայաստանի հանրապետության բուհերի շարքում առաջատար դիրքերում է: Ինստիտուցիոնալ հավատարմագրման ընթացքում ԵՊՀ են այցելել արտասահմանյան փորձագետներ, որոնք մանրամասն ուսումնասիրությունից հետո տվել են դրական եզրակացություն:

ԵՊՀ-ն միշտ եղել է առաջատար դիրքերում, մեր ուսանողները միջազգային հարթակներում ցույց են տալիս լավագույն արդյունքներ՝ միջազգային համագործակցության շրջանակներում ուսանելով եվրոպական բուհերում: Իհարկե, շատ աշխատանքներ կան անելու, բայց չի կարելի չգնահատել ունեցածը, պետք է

պահպանել այն ձեռքբերումները , որոնք կան և զարգացնել դրանք: ԵՊՀ-ն ունի բարձրակարգ մասնագետներ: ԵՊՀ-ն ազգային արժեք է և չի կարելի թույլ տալ նսեմացնել այն: Մենք ունենք շատ խնդիրներ, որոնք լուծում են պահանջում և այս պահին էլ լուծման փուլում են: Շատ խնդիրներ բխում են ֆինանսական հնարավորություններից և պայմանավորված են ընդհանուր տնտեսական վիճակով: Մեր ֆակուլտետում կատարվել են բարեփոխումներ, ներմուծվել են նոր կրթական ծրագրեր, որոնք ապահովում են երկու օտար լեզուների հավասարազոր ուսուցում, վերջերս բացվեցին սինխրոն թարգմանության երկու լսարաններ, ինչպես նաև ակադեմիական նվաճումների կենտրոնը, որը այլ գործունեությունից բացի իրականացնում է ֆրանսերեն լեզվի անվճար դասընթացներ համալսարանի աշխատակիցների և ուսանողների համար:

Վերջերս հանդիպում ունեցանք դպրոցների աշակերտների հետ, որոնք հետաքրքրված են լեզուների ուսուցմամբ և ցանկություն են հայտնում ուսումնասիրել նաև երրորդ օտար լեզու: Պետք է ընդառաջ գնալ նրանց ցանկություններին և մտածել երրորդ լեզուն դասավանդելու հնարավորության և ձևերի մասին: Արդեն կա առաջարկություն ռոմանական բանասիրության ամբիոնից ներմուծել պորտուգալերեն լեզվի դասավանդումը հաջորդ ուսումնական տարվանից:

Ձ. Հարությունյան- Այն, ինչ կատարվում է ԵՊՀ-ի շուրջ շատ տհաճ է: Մեր ռեկտորը պատշաճ մակարդակով է իրականացրել իր գործառնությունները, նա լավ մտավորական է և դա գենետիկ մակարդակով է այդպես: Պահանջել նրա հրաժարականը դիլենտատություն է, ոչ կոմպետենտություն, Ինչպես կարելի է նման հարցեր բարձրացնել ԵՊՀ-ի 100- ամյակին ընդառաջ, ինչպես կարելի է գնալ նման քայլերի: Ռեկտորին ներկայացվող բոլոր մեղադրանքները անհիմն են և խախտում են մարդու անմեղության կանխավարկածը: Թերությունների թվում նշվում է նաև այն, որ ԵՊՀ-ն չկա 300 լավագույն բուհերի շարքում և որ նվազել է ուսանողների թիվը: Բայց այս խնդիրներն ունեն օբյեկտիվ պատճառներ:

Շատերը փորձում են պղտոր ջրում ձուկ որսալ, ով է Նարեկ Մայրանը, որ պետք է պաշտպանի ԵՊՀ-ի շահերը, ինչու պետք է նա կազմակերպի միտինգներ ի պաշտպանություն համալսարանի, այլ ոչ թե համալսարանականները: Մենք ենք ստեղծել այս իրավիճակը ,մենք կարող էինք թույլ չտալ, կարող էինք կասեցնել:

Արդյոք ճիշտ է շարունակել առճակատումը ԵՊՀ-ի և նախարարության միջև, առաջարկում եմ դիմել ՀՀ վարչապետին՝ ԵՊՀ-ի և նախարարության միջև ինչ-որ ձևով երկխոսություն սկսելու համար: ԵՊՀ-ի շուրջ եղած այս խոսակցությունները պետք է չշարունակել և տանել մարման:

Վերջում ուզում եմ շնորհավորել բոլորիս ֆակուլտետի անվանափոխության առիթով և ընդգծել, որ փոխվել է ոչ միայն անվանումը, այլ նաև բովանդակությունը:

Ռ.Ղազարյան- Կիսում եմ Ձ.Հարությունյանի կարծիքը: Կարևոր է տարանջատել ԵՊՀ-ն և նրա ղեկավարին: Այստեղ խնդիրը ռեկտորի անձը չի, այլ այն հարվածները, որոնք հասցվում են ԵՊՀ-ին: Մենք ենք մեղավոր, Նարեկ Մայրանի փոխարեն պիտի լինեինք մենք՝ պրոռեկտորներ, ղեկաններ: Ցեխ է շարտվում մայր բուհի վրա, եթե համալսարանը այդքան վատն է, ինչու են բոլորը ձգտում ղեկի համալսարան: Եթե մենք թույլ ենք տալիս ,որ մեզ անվանեն ճահիճ, ուրեմն մենք ենք մեղավոր: Մենք պիտի անենք մեր գործը ու հոգ տանենք ԵՊՀ-ի մասին, մենք բոլորս նվիրյալներ ենք, մենք մեզնից պիտի պահանջենք, ինչպես մեզ պահում ենք ,այնպիսի պատասխան էլ ստանում ենք: Եթե ԵՊՀ-ն ճահիճ է, ես ուրախ եմ, որ աշխատում եմ այս <<ճահիճում>>, այլ ոչ թե հարակից <<պարտեզներում>>:

Ս.Գասպարյան- Կիսում եմ գործընկերներիս մտահոգություններն ու կարծիքները: Մենք ունենք մեղքի մեր բաժինը՝ պայմանավորված մեր վարքագծով, մեր գործունեությամբ և ուսանողների հետ կապված խնդիրներով: Համալսարանի ղեմքը մենք ենք ձևավորում, համալսարանն ամեննին էլ ճահիճ չի, ես չեմ կիսում այդ կարծիքը: Գուցե ճահիճ կա մարդկային հարաբերություններում, բայց ոչ ԵՊՀ-ում: ԵՊՀ-ում կան դրական տեղաշարժեր, որոնք արձանագրված են միջազգային կառույցների կողմից: Բայց մարդը անսխալական չէ, եկենք մտածենք , թե ինչպես անենք, ինչպես մեզ դրսևորենք ու աշխատենք, որ ավելացնենք այն դրականը, որ կա: Հոգաբարձուների խորհուրդի վերջին նիստը գործին չտիրապետելու ակնհայտ դրսևորում էր, ապրեն մեր գործընկերները, որ կարողացան շիտակ արտահայտել իրենց կարծիքը: Մեծ էր նաև իրավաբանի դերը, ով կարողացավ բացատրել, որ նման հարցադրում անելը իրավաչափ չէ: Միսալներն այնքան ակնհայտ էին, որ դա հասկանալու համար անգամ հատուկ կրթություն ունենալու անհրաժեշտություն չէր զգացվում: ԵՊՀ-ն ազգային արժեք է, այն պետք է մեր գլխից վեր պահենք: Այս տարիների ընթացքում պարոն Սիմոնյանի կողմից որևէ անպարկեշտ քայլ, մոտեցում, արձագանք, կարծիք չեմ արձանագրել: Կարծում եմ, այս ամենը օդի վրա է կառուցած: Պիտի գնահատել՝ նա լուրջ ղեկավար է, լուրջ գիտնական է՝ սերած պարկեշտ ընտանիքից:

Ա. Ղազարյան-ՌԻԽ նախագահ- Համալսարանի շուրջ տեղի ունեցող իրադարձությունները նոր չեն սկսվել: Համալսարանը վարկաբեկող ուսանողները ուղղորդվում են կրթության նախարարի կողմից, նրանք Սորոսի հիմնադրամից ստացել են գրանտներ իրավիճակը ապակայունացնելու համար: Ռեկտորի դեմ հետապնդումները ունեն քաղաքական դրդապատճառներ:

Ա. Ղազարյանը խնդրեց ժամանակ տրամադրել առաջարկություններ ներկայացնելու համար:

Մ.Ապրեսյան- Այն տգեղ երևույթը, որին ականատես եղանք, երբ անպարկեշտ երիտասարդները փակել էին ռեկտորի ճանապարհը, բոլորիս տհաճություն պատճառեց և մենք մեզ վատ զգացինք, որ նման երիտասարդներ ենք դաստիարակել,

բայց հոգաբարձուների վերջին նիստի ժամանակ մենք հաղթեցինք, որովհետև ունենք ԵՊՀ ՈԻԽ նախագահ Դավիթ Ափոյանի նման երիտասարդներ, որը փայլուն ելույթ ունեցավ:

Որոշեցին՝ Մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնել ֆակուլտետի աշխատանքների բարելավմանը միտված առաջարկություններ:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Որոշեցին՝

- Հաստատել Արփի Գասպարյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ Ալեասնդրո Մանձոնիի *Նշանվածները* վեպի լեզվաբանաստեղծական արժեքը և դրա վերարտադրությունը հայերեն թարգմանություններում՝ Ժ.02.08 «Ռոմանական լեզուներ /իտալերեն/ մասնագիտությամբ: Ներկայացնել միջնորդություն ՀՀ ԲՈԿ-ին՝ ստանալու վերջինիս թույլտվությունը ատենախոսության գիտական ղեկավար նշանակելու Իտալիայի Կա՛Ֆոսկարի համալսարանի պրոֆ., բ.գ.դ. Սոնա Հարությունյանին:

- Ռոմանական բանասիրության ամբիոնի *Ծաղիկ թարգմանությանց* մատենաշարի չորրորդ հատորը երաշխավորել հրատարակման :

-Անգլիական բանասիրության ամբիոնի դասախոսներ Ա.Գալստյանի,Ռ.Առաքելյանի, Գ.Հարությունյանի, Ա.Մաթևոսյանի *Global English : Development Trends* ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակման:

-Գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ Յ.Գաբրիելյանի *Լեզու, լեզուներ և ժողովուրդներ* մենագրությունը երաշխավորել հրատարակման:

Եվրոպական լեզուների և հաղորդակցության

ֆակուլտետի ղեկան և գիտխորհրդի նախագահ, պ.գ.թ., դոց.՝ Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.դ., դոց.՝

Գ.Մուրադյան

07 մարտի 2019թ.